ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» 2003 թվականի մայիսի 21-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում «ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով» բառերը փոխարինել «ծխախոտի արտադրանքը (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	**Ապրանքախմբի անվանումը**	**Հարկման բազայի միավորը**	**Ակցիզային հարկի դրույքաչափը (ՀՀ դրամ)**			
			2020 թվականի հուլիսի 1-ից	**2021 թվականի հունվարի 1-ից**	**2022 թվականի հունվարի 1-ից**	**2023 թվականի հունվարի 1-ից**

»,

բ. երկրորդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2204	խաղողի գինի	1 լիտր	150

»,

գ. յոթերորդ տողից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«

2402 (բացառությամբ 2402 10 00011 2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)	ծխախոտի արտադրանք	ներքին արտադրանքի 1000 հատի համար	7 700	9 410	10 820	12 445
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1000 հատի համար	9 625	11 070	12 730	14 640
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	605 000	623 150	641 300	659 450
2402 10 00012 2402 90 00012	սիգարելա	1000 հատ	16 500	16 995	17 490	17 985

»,

դ. յոթերորդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2403	ծխախոտի	1	1 500	1 545	1 590	1 635

(բացառությամբ 2403 99 90 090)	արդյունաբերական փոխարինիչներ	կիլոգրամ					»,

ե. յոթերորդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

« 2403 99 90 090	ծխախոտի արտադրանք	ներքին արտադրանքի 1000 հատի համար	1 600	1 955	2 295	2 635	»,
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1000 հատի համար	2 000	2 300	2 700	3 100	

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ակցիզային հարկ վճարողների, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների (բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշշալցված կոնյակի, չշշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների) օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 6 000 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մաս.

«5.1. Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի)՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով, չի կարող պակաս լինել 1 լիտրի համար՝

1) մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5 000 ՀՀ դրամից.

2) 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5 500 ՀՀ դրամից.

3) 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6 000 ՀՀ դրամից.

4) 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9 000 ՀՀ դրամից.

5) 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14 000 ՀՀ դրամից։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից։

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**